



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԿԵՏԷ**  
**Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՅՑ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 2 Յունուար, Տարեմուտի առաջին Կիրակին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ պատգամը:

Հայկական գեղեցիկ աւանդութիւն է նոր տարին դիմաւորել Աստուծոյ Տան մէջ, երախտագիտութիւն յայտնել Աստուծոյ մեզի շնորհած բարիքներուն համար եւ կեանքի նոր շրջանը բանալ աղօթքով ու աստուածային պարգեւներու խնդրանքով:

Համաձայն այս աւանդութեան, Շաբաթ, 1 Յունուարին, Նոր Տարուան առաջին օրը, Թեմիս Եկեղեցիները բաց պիտի ըլլան հաւատացեալներուն դիմաց եւ ժամերգութիւն տեղի պիտի ունենայ:

**PRELATE TO PRESIDE OVER FIRST DIVINE LITURGY OF THE**  
**NEW YEAR AT ST. GARABED CHURCH**

On Sunday, January 2<sup>nd</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Garabed Church in Hollywood.

In keeping with a beautiful tradition, on Saturday, January 1<sup>st</sup>, morning services will be offered in Prelacy Churches to start the new year with prayers.

\*\*\*

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ 2011 ՏԱՐԻՆ ՀՈՉԱԿԵՑ**  
**«ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐԻ»**

Վերջին տասնամեակին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճամբով, մեր ժողովուրդի ու եկեղեցւոյ կեանքին մէջ լուսարձակի տակ բերուող յատկանշական ու հիմնական մտահոգութիւնները, ամբողջ

տարուան ընթացքին ուշադրութեան առարկայ կը դառնան, վերանորոգելով մեր ազգային կեանքը:

Մեր հասարակաց կեանքին վերաբերող կարեւոր երեւոյթները ու մտահոգութիւնները տարուան նշանաբանը դարձնելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս մեր ազգային գիտակցութեան թափ կու տայ, վերազարթօնքի հրաւիրելով մեր ժողովուրդի զաւակները:

2010 տարին «Հայ Կնոջ Տարի» հռչակած էր Նորին Սրբութիւնը: Այս առիթով, մեր թեմերէն ու գաղութներէն ներս տեղի ունեցան զանազան ձեռնարկներ ու հրատարակութիւններ հայ կեանքէն ներս կնոջ դերը քննարկող ու վերաշեշտող:

Հայրապետական յատուկ Գիրով, յառաջիկայ 2011 տարին, որուն սեմին կը գտնուինք, Վեհափառ Հայրապետը հռչակեց ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐԻ: Այս առիթով հրատարակած Վեհափառ Հայրապետին Հայրապետական Գիրը թեմերու եկեղեցիներէն ներս պիտի կարդացուի 2011 տարուան Յունուար ամսուան ընթացքին:

## **H.H. CATHOLICOS ARAM I DECLARES 2011 THE "YEAR OF THE ARMENIAN CHILD"**

In a recent Pontifical message addressed to the Diocesan Prelates and the faithful, His Holiness Aram I declared 2011 as the "Year of the Armenian Child, when Dioceses should give special attention issues related to children.

During the past decade, Catholicos Aram I has been working to raise awareness on global issues and their impact on the lives of different members of the community. The Year of the Armenian Child comes soon after the Year of the Armenian Woman. This proclamation will aid the leadership in empowering children towards their future responsibilities, because they are the future of our church and community.

\*\*\*

## **ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԸՐԱԳԱԼՈՅՑԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ**

Չորեքշաբթի, 5 Յունուարը Ս. Ծննդեան ճրագալոյցի օրն է:

Հետեւաբար, նոյն օրը, երեկոյեան, Ս. Պատարագ պիտի մատուցուի մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ եւ Ս. Հաղորդութիւն պիտի տրուի հաւատացեալ ժողովուրդին:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ եւ պիտի փոխանցէ օրուան պատգամը:

Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր եկեղեցւոյ մէջ:

Իսկ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ:

## CHRISTMAS EVE DIVINE LITURGY SCHEDULE

On Wednesday, January 5th, 2011, Christmas Eve Divine Liturgy will be celebrated in all our churches followed by the offering of Holy Communion.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Sarkis Church in Pasadena.

Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello, and Very Rev. Fr. Barthev Gulumian at St. Garabed Church in Hollywood.

\*\*\*

### ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ Ս. ԾՆՆՂԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳՆԵՐՈՒ

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Հինգշաբթի, 6 Յունուարի առաւօտուն, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր Սուրբ Պատարագ, որուն աւարտին պիտի կատարուի աւանդական ջրօրհնէք:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ, իր պատգամը պիտի փոխանցէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Նորթ Հոլիվուտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Ս. Պատարագը պիտի մատուցուի բացառաբար առաւօտեան ժամը 10:00-ին:

Պիտի պատարագէ, պիտի քարոզէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ շրջանի հոգեւոր մատակարար՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան:

Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Օրէնճ Բառնթիի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ:

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Զրեւենթա Հովիտի Հայց. Առաք. եկեղեցւոյ Ս. Պատարագ պիտի մատուցուի Հինգշաբթի, 6 Յունուարին, առաւօտեան ժամը 11:00-ին, Ազգ. Առաջնորդարանին մէջ: Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ շրջանի հոգեւոր մատակարար Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

## CHRISTMAS DIVINE LITURGY SCHEDULE

On Thursday, January 6<sup>th</sup>, 2011, the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ will be ceremoniously celebrated with Divine Liturgy and the blessing of water in all Prelacy Churches.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of water at St. Mary's Church in Glendale.

H.E. Archbishop Yeprem Tabakian will conduct services at Holy Martyrs Church in Encino.

Very Rev. Fr. Muron Aznikian will conduct services at the North Hollywood parish, where the service will begin at 10:00 a.m.

Very Rev. Fr. Barthev Gulumian will conduct services at Forty Martyrs Church in Orange County.

Divine Liturgy at the Crescenta Valley parish will be celebrated at 11:00 a.m. at the Prelacy, by Rev. Fr. Ardak Demirjian.

\*\*\*

### **ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ ՄԵՌԵԼՈՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Ուրբաթ, 7 Յունուարին, Ս. Ծննդեան Մեռելոցի տօնին առիթով, եւ համաձայն մեր եկեղեցւոյ աւանդութեանց, մեր հանգուցեալ հարազատներուն յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի «Յոլիվուտ Յիլզ»ի գերեզմանատան Hall of Liberty մատրան եւ Կլենտէյլի գերեզմանատան Church of Recessional եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00-ին, գլխաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն:

### **MEMORIAL DAY REQUIEM SERVICE AT FOREST LAWN**

On the morning of Friday, January 7<sup>th</sup>, 2010, Christmas memorial day services will take place at Forest Lawn Hollywood Hills and Glendale, beginning at 10:00 a.m.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over services, which will take place with the participation of clergy.

\*\*\*

### **Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՂՕԹՔ ԵՒ ԶՐՕՐՀՆԷՔ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՋ**

Մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւոր դասուն, 7 Յունուարին, Ս. Ծննդեան յատուկ աղօթք եւ ջրօրհնէք պիտի կատարուի «Արարատ Տան» Միշըն Յիլզի կեդրոնին մէջ:

Կեսօրուան ժամը 12-ին բոլորը միասնաբար պիտի մասնակցին սիրոյ ճաշին, որմէ ետք պիտի կատարուի ջրօրհնէքի արարողութիւն եւ պատսպարեալները Ս. Զաղորդութիւն պիտի ստանան:

Աւելի ուշ, հաստատութեան հիւանդանոցի բաժինին մէջ նոյնպէս պիտի կատարուի ջրօրհնէք եւ աղօթք:

## **CHRISTMAS PRAYER SERVICE AND BLESSING OF WATER AT ARARAT HOME**

In celebration of the Nativity and Theophany of our Lord Jesus Christ, on Friday, January 7<sup>th</sup>, special prayers and the blessing of water will take place at Ararat Home in Mission Hills.

Following a luncheon at noon, the Prelate and clergy will conduct the blessing of water at the assisting living facility, after which the residents will receive Holy Communion.

A prayer service and the blessing of water at the nursing facility will follow.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՐԱՉԻԼԻՈՅ ԶԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Ս. ՏԱԹԵՎ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**



Երեքշաբթի, 28 Դեկտեմբերի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Պրագիլիոյ հայոց թեմի առաջնորդ Գերշ. Ս. Տաթեւ Արք. Ղարիպեանի:

Տրուած ըլլալով, որ հիւր Սրբազան Զայրը Լոս Անճելըս կը գտնուէր ու տարիներու բարեկամութիւն ունի Առաջնորդ Սրբազանին հետ, փափաքած էր ամանորի ու Ս. Ծննդեան տօնի առիթով այցելութիւն մը տալ Ազգ. Առաջնորդարան ու փոխանցել իր բարեմաղթութիւնները: Բարձրաստիճան հոգեւորականին Ազգ. Առաջնորդարան առաջին այցելութիւնը ըլլալով, Առաջնորդ Սրբազանը ծանօթութիւններ տուաւ նոր շէնքի կառուցման ընթացքին ու անոր յարկին տակ այժմ տարուող բազմաճիւղ աշխատանքներուն մասին:

Զրաժեշտի պահուն, երկու

Առաջնորդները բարեմաղթություններ փոխանակեցին, յոյս յայտնելով, որ 2011 տարին ըլլայ բարեբեր տարի:

## PRELATE WELCOMES PRIMATE OF BRAZIL H.E. ARCHBISHOP DATEV KARIBIAN



On Tuesday, December 28<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the Primate of the Armenian Diocese of Brazil, H.E. Archbishop Datev Karibian, who is currently visiting Los Angeles.

Given that it was Archbishop Karibian's first visit, the Prelate familiarized him with the Prelacy and its

various departments and endeavors.

At the conclusion of their visit, the Prelate and Primate exchanged well wishes for a blessed new year.

\*\*\*

## ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԴՈՒԹԻՒՆ ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՁ



Մարտիրոսեան:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն եւ հոգաբարձութեան խնդրանքին ընդառաջելով, Կիրակի, 26 Դեկտեմբերին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ սարկաւազական ձեռնադրութիւն կատարեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Արք.

Քրիստոնեայ եկեղեցւոյ առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս Նախասարկաւագի տօնի շաբաթավերջին, սարկաւագական կարգ ստացան եկեղեցւոյ Նուիրեալ վեց ուրարակիրներէն՝ Յրանդ Կեօքկեօզեան, Սեդրակ Զարատօլեան, Րաֆֆի Նալճեան, Րաֆֆի Զիրքճեան, Արթուր Մաճառեան եւ Միհրան Վարդանեան:

«Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ, Առաջնորդ Սրբազան Զօր գլխաւորած թափօրը եկեղեցի մուտք գործեց եւ քարոզէն անմիջապէս առաջ, տեղի ունեցաւ սարկաւագական ձեռնադրութիւնը:

Ձեռնադրութեան ընթացքին խարտաւիլակ քահանայ հայրերը ձեռնադրեալները Ներկայացուցին Առաջնորդ Սրբազան Զօր: Սրբազան Զայրը քահանայ հայրերուն վկայութիւնը ուզեց Նուիրեալներու բարեկենցաղ ընթացքին մասին եւ թէ՛ արժանի՞ են սարկաւագական աստիճանի կարգ ստանալու: Անոնց դրական վկայութիւնը ստանալէ ետք Նուիրեալներու մասին, Սրբազան Զայրը անոնց շնորհեց սարկաւագական կարգ, եւ անոնց վրայ իր ձեռքերը դնելով աղաչեց Սուրբ Զոգիէն, որ անոնց վրայ հանգչի, մաքրէ զանոնք ամէն տեսակ աշխարհիկ մտահոգութիւններէ եւ արժանի դարձնէ սարկաւագական կոչում ստանալու:

Յուզիչ էր պահը, երբ ձեռնադրեալները դէպի արեւմուտք դառնալով, իրենց ափերը հրաժարիմքի ձեւով լայն բանալով՝ հրաժարեցան աշխարհիկ զբաղմունքներէ եւ կոչուեցան ի դպրութենէ ի սարկաւագութիւն: Անոնք ապա իրաւունք ստացան պատարագիչ եկեղեցականը զգեստաւորելու, Ս. Սկիհը վերաբերելու, խորհրդատետրէն կարդալու, Աւետարան ընթերցելու եւ բուրվառ կատարելու:

Ապա Առաջնորդ Սրբազան Զայրը իր հոգեշունչ պատգամը տուաւ եւ յորդորական խօսքեր ուղղեց Նորընծաներուն: Ան վեր առաւ Նախատակ Ս. Ստեփանոս Նախավկայ սարկաւագի առաքիլութիւնները, որպէս համայն սարկաւագներու տիպար օրինակ, ու թելադրեց Նորոգ ձեռնադրեալներուն հետեւիլ իրենց ուսուցչին, մանաւանդ խրախուսեց չթուլնալ, չտկարանալ ու յարատեւել իրենց սրբանուէր կեանքին մէջ:

## PRELATE ORDAINS DEACONS AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE



Saturday, December 25<sup>th</sup>, 2010, was the feast of St. Stephen the first deacon and Proto-martyr.

On Sunday, December 26<sup>th</sup>, the feast of St. Stephen, which is also a celebration of deacons, was commemorated in all Prelacy churches during Divine Liturgy. On this occasion, H.E.

Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, deliver the sermon, and ordained deacons at St. Mary's Church in Glendale.

The newly ordained deacons are Hrant Guekguezian, Setrag Karadolian, Raffi Naljian, Raffi Kurkjian, Arthur Majarian, and Mihran Vartanian.

With the singing of the "Hrashapar" hymn, the Prelate entered the church in a procession to begin the celebration of the Divine Liturgy.

The ordination of the deacons took place prior to the sermon. With the stole-bearers kneeling on the altar, the Prelate beseeched Almighty God to bless them and cleanse them of their sins as they prepared to receive the rank of deacon. Facing westward, the stole-bearers renounced their worldly transgressions and accepted their new responsibilities as deacons.

In his sermon, the Prelate extolled the life and virtues of St. Stephen, urging the newly ordained deacons to remain unwavering in their faith and duties and to live and service in the example of St. Stephen.

\*\*\*